

Օդ ու լոյսի, երգ ու ծիծաղի կարօտ,
 Բայց երգը, որ իր ալուգքէն կը թռչի,
 Անտես ու ստուերոտ սանդուխներու վրայ
 Կ'իյնայ շնչահեղծ:
 Շողա՛, շողա՛, բարի՛ արեւ, հիւանդ եմ...
 Ճառագայթող գոլիդ մէջ հեշտագրգիռ,
 Մինչ կը խժայ տարօրինակ, խօլ պարը զամբումներուն՝
 Զուրբէ՛դ գինովցած՝
 Ու, մինչ թուփ ու ծաղիկ ծարաւէն կը մարմըրին,
 Ես կ'ըմբռնչիմ խտողտանքն անանուն՝ երջանիկ տիւանդորրիս,
 Յամբօրէն ու գիտակից
 Գինովութեամբ հեշտագին:
 Զի՛չ մըն ալ դեռ,
 Ա՛հ, շողա՛, շողա՛, բարի՛ արեւ, հիւանդ եմ...
 Վերջին անգա՛մ մըն ալ,
 Դեռ իրիկո՛ւն չեղած
 Ու, դեռ տամուկ գիշերին վըհուկը գիս չընդգրկած,
 Վերջին անգա՛մ մըն ալ,
 Փարէ՛ հոգւոյս խանդաբորբ ու կաթոգի՛ն,
 Զիւանդ եմ, բարի՛ արեւ, շողա՛, շողա՛...

32. ՅԱՅԳԱՅԻՆ

Լուսնի մահիկն երբ
 Սանդուխներու վրայ
 Մեղմով կը տեղայ
 Լոյծ, անձրեւակերպ
 Սահանքն իր լոյսին:

Եւ երբ մանիչակ
 Գոլորշիներուն
 Մըշուշն անապակ
 Կը ծաղկի թրթռուն
 Ծովերուն վըրայ:

Խորն իմ սենեակիս
 Կը հանգչի հոգիս.
 Փակաչք ու անթարթ
 Կը ծըփամ հանդարտ